ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՆԴԿԱՍՏԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՇԽԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Բանալի բառեր - բարեկամական և բազմակողմանի հարաբերություններ,փոխադարձ այցեր, քաղաքական խորհրդակցություններ, միջկառավարական հանձնաժողով, երկկողմ առևտուր, ապրանքաշրջանառությունը, բարեկամության և մշակութային միություն, հնդկական սննդի փառատոն:

Հնդկաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների հիմքը հանդիսանում են բազմաթիվ փուլեր անցած պատմական, մշակութային և առևտրական կապերը: Ադրբեջանի անկախացումից ի վեր Հնդկաստանը կառուցել է բարեկամական և բազմակողմանի հարաբերություններ՝ 1991թ.-ի դեկտեմբերին ճանաչելով Ադրբեջանի անկախությունը, դիվանագիտական հարաբերություններ հաստատելով 1992թ-ի փետրվարի 28-ին իսկ արդեն 1999թ.-ին Բաքվում բացելով դեսպանություն:

Երկկողմ հարաբերությունների տարեցտարի զարգացումը կախված էր մի շարք կարևոր փոխադարձ այցերով, որոնցից հարկ ենք համարում նշել դեռևս 1956 և 1961թթ.-ին Հնդկաստանի նախագահ Ռադհակրիշնայի և վարչապետ Ներուի այցերն Ադրբեջան:Իսկ արդեն Ադրբեջանի անկախացումից հետո՝ 1998թ-ի փետրվարին, Հնդկաստանի արտաքին գործերի նախարարության քարտուղար Ն. Դայալը և համատեղ քարտուղար Ա. Սենի այցը: Քաղաքական խորհրդակցությունների դերը կարևորելով 2007թ-ի մարտին Ադրբեջանի փոխարտգործնախարար Խալաֆովը այցելեց Դելի՝ մասնակցելու քաղաքական խորհրդակցության, որի հաջորդ փուլը արդեն կայացավ Բաքվում 2011թ-ին: Կառավարությունների միջև համագործակցության նպատակով 2009 թ. նոյեմբերի 26-ին Դելիում տեղի ունեցավ միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը, որի համանախագահներն էին Էկոլոգիայի և բնական պաշարների նախարար Հ. Բաղիրովը, և Առևտրի և արդյունաբերության հարցերով պետնախարար Ջ. Սկինդիան, և համապատասխանաբար երկրորդ նիստը տեղի ունեցավ Բաքվում՝ 2012 թ-ի ապրիլի 16-ին: Իսկ արտաքին քաղաքականութ-

յան հարթակում կարևոր էր 2013թ.-ի մայիսի 2-5-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի պաշտոնական այցը Հնդկաստան, որի ընթացքում Է.Մամեդյարովն հանդիպումներ ունեցավ Հնդկաստանի փոխնախագահ Մուհամմադ Համիդ Անսարիի և Հնդկաստանի արտգործնախարար Մալման Խուրշիդի հետ, ինչպես նաև ստորագրեց նախարարությունների միջև համագործակցությաբ մասին արձանագրությունը:

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո երկու երկրների միջև հիմք դրվեցին նաև տնտեսական ոլորտում համագործակցությունը: Այնուամենայնիվ Ադրբեջանի քաղաքական և առևտրային կապերը 1990 - ականներին և 21-րդ դարի սկզբին շատ քիչ կապ ունեին Հնդկաստանի հետ,սակայն բարձրաստիճան պաշտոնյաների երկկողմ այցերի ընթացքում մեկնարկեցին, մինչդեռ Քաշմիրի հարցում ադրբեջանական կողմի աջակցությունը Պակիստանին արդեն իսկ խնդրահարույց էր: Չնայած այն հանգամանքին որ 2001-2010 թվականներին բազում բարձրաստիճան հարթակներում հանդիպումներ են կայացել, սակայան այդպես էլ Հնդկաստանի ադտաքին քաղաքականության համար Ադրբեջանը չդարձավ երկրորդ ուղեծիր:[1]

Հնդկաստանի և Ադրբեջանի միջև երկկողմ առևտուրը այլ ուղի է ունեցել: Այն 2000-2010 թվականների ընթացքում աճել է 10 անգամ (50 միլիոն դոլարից հասնելով մոտ կես միլիարդ դոլարի 2017թ.-ին): Առևտրի այս ցատկը համընկավ 2007թ.-ին Բաքու-Թբիլիսի-Ջեհյան նավթամուղի դեպի Միջերկրական ծով ելքի բացման հետ, որտեղից ել հնդկական նավթ ներմուծող կազմակերպությունները կարողացան նավթամթերք ձեռք բերել: Բնականաբար երկկողմ առևտուրը հիմնականում կենտրոնացված էր տարատեսակ սննդամթերքների ներմուծման և արտահանմամբ(մսամթերք, թեյ, բրինձ և այլն)վրա: 2016թ. առաջին կեսի տվյալներով Հնդկաստանի արտահանման ծավալը Ադրբեջան կազմել է 146,36 միլիոն ԱՄՆ դոլլար, որն, իհարկե, հնդկական կազմակերպությունների համար այդքան էլ մեծ թիվ չի կազմում, քանզի նրանք կարող են ադրբեջանական շուկայում ունենալ ավելի լայն հնարավորություններ: 2016թ.-ի սկզբին նախարարների երկկողմ հանդիպումը նույպես խթանեց առևտրի զարգացմանը: Որ սննդամթերքն ու խմիչքները կարող են էական դեր խաղալ առևտրի զարգացման գործում կասկածից զերծ է: Տարեցտարի

[1] **Avijit Goel,** Improving logistics will boost bi-lateral trade. https://www.the hindubusines sline.com/opinion/azerbaijan-outreach/article235 49949.ece
Հասանելի է 23.05.2019 ժամը 13.51: Embassy of the Republic of Azerbaijan to the Republic of India http://newdelhi.mfa.gov.az/en/content/41.

ակտիվացնելով առևտրային շարժը, Հնդկաստանը ձեռնամուխ է լինում Ադրբեջանից և դեպի Ադրբեջան ապրանքների ապահով և արագ տեղափոխմանը: Դեռևս 2016թ.-ի սեպտեմբերին Ադրբեջանում Հնդկաստանի դեսպան Սանջեյ Ռանանի և Ադրբեջանի մշակույթի և տուրիզմի նախարար Աբուլֆազ Գարայևի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին ուղիղ օդային չվերթներ մեկնարկելու հարցը:Միջազգային Հյուսիս-հարավ ճանապարհը այդ ընթացքում դեռևս կառուցման փուլում էր գտնվում,սակայն այն նույնպես կարևոր ներդրում կունենա երկկողմ առևտրի զարգացման հարցում: Ակնկալվում է, որ 2017թ-ին ավարտելով ճանապարհի շինարարությունը, հնդկական նավահանգիստները Ադրբեջանի հետ կապ կհաստատեն Իրանի միջոցով:4500 մղոն երթուղին կտրուկ նվազեցնում է Հնդկաստանի և Ադրբեջանի միջև փոխադրման ժամկետները, իսկ երթուղու բացակայությամբ ապրանքափոխադրումը տևում է մոտավորապես 42 օր՝ շրջանցելով Հյուսիսային Աֆրիկան և Եվրոպան: Ինչ վերաբերում է ապրանքնատեսակների ներմուծմանը և արտահանմանը, ապա գերակշռում են 2 հիմնական ապրանքատեսակներ՝ բրինձ և տավարի միս: Հնդկաստանի արտահանման հարթակներում բրինձը ի սկզբանե գերակշիռ դեր ունի, քանզի այս պետության հիմնական բերքն է, և տարեկան համաշխարհային ծավալով 30% արտահանում է գրանցում, որը կազմում է տարեկան 6 միլիարդ ԱՄՆ դոլար: Ադրբեջանի՝ Հնդկաստանից ներմուծման տոննաժով բրինձը ամենամեծ քանակությունն է կազմում: Համաձայն ԱզՍտատ-ի՝ Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի տվյալների, 2015թ.-ին Հնդկաստանը ներմուծել է Ադրբեջան 12925 տոննա բրինձ,որը կազմել էր 3216600 ԱՄՆ դոլար: Այսպիսով, Հնդկաստանը հետ է մղում Ռուսաստանին,որը 2015թ.-ին 9899 տոննա բրինձ էր ներմուծել:

Ադրբեջանական շուկայում Հնդկաստանի ամենաարժեքավոր արտադրանքը սառեցված տավարի մսով ապրանքն է, որը 2015 թվականին կազմել է 4368800 ԱՄՆ դոլար: Ըստ այդմ, այդ ժամանակահատվածում Ադրբեջանը Հնդկաստանից ներմուծել է 2647 տոննա տավարի և խոզի միս: Այս ցուցանիշը ցածր է Ուկրանիայի կողմից Ադրբեջան արտահանվող տավարի մսի արժեքից, որը տվյալ ժամանակահատվածում կազմել է 5057400 ԱՄՆ դոլար: Այնուամենայնիվ Հնդկաստանը Ադրբեջան է արտահանում 650 տոննա ավել տավարի միս 2015 թվականի ընթացքում:

Հնդկաստանը, լինելով չորրորդ երկիրը թեյի արտահանման ոլորտում, 2015 թվականին 1 միլիոն դոլար արժողությամբ թեյ է արտահանել Ադրբեջան: Ադրբեջանին մատակարարելու տեսանկյունից Հնդկաստանը երկրորդ տեղում է Շրի Լանկայից հետո, որը մատակարարել է 60678 տոննա 2015 թվականին: Հարկ է նշել, որ Հնդկաստանի և Ադրբեջանի

առևտրային հաշվեկշռի գերակշիռ մասը հանքային արտադրանքն է, իսկ սննդամթերքի արտահանումը Հնդկաստան շարունակում մնալ փոքրաքանակ: Այնուամենայնիվ Ադրբեջանը մեծ ջանքեր է գործադրում իր սննդի վերամշակման ոլորտը զարգացնելու համար: Վերամշակող սարքավորումների և տեխնիկայի հնդիկ արտադրողները պետք է կարողանան գտնել լայն հնարավորություններ Ադրբեջանում այս ոլորտը զարգացնելու համար: Ադրբեջանի կառավարության հովանու ներքո արդյունաբերական մեծ ծրագիր է մշակվում: Այս քայլով նավթից և հանքային արտադրանքից երկիրի կախվածությունը թուլանում է: Որպես այդպիսին, ընթանում է գյուղատնտեսության ու սննդի վերամշակման ընդլայման և խթանման համապետական ծրագիր: 2016թ-ի տվյալների համաձայն Ադրբեջանի և Հնդկաստանի միջև առևտրաշրջանառությունը կազմում էր 316,4 միլիոն ԱՄՆ դոլլար: Ավելի քան 82 հնդկական կազմակերպություններ գրանցված էին ադրբեջանական տնտեսության տարբեր ոլորտներում, ինչպիսիք են սպասարկումը,առևտուրը, արդյունաբերությունը, տրանսպորտը:[1]

Պատկերը այլ է նավթաարդյունաբերության ոլորտում. ONGC Վիդեշ ՍՊԸ-ն ձեռք է բերել Ազերի-Չիրագ-Գյունեշլիում նավթի արդյունահանման 2.72% բաժնետոմսեր, իսկ 2.36% բիթքոյն: 2014թ.-ի նոյեմբերի 2-ին Ադրբեջանի Հանրապետության Պետական Նավթային կազմակերպությունը և Հնդկաստանի բնական գազի առաջատար ընկերությունը ՝ GAIL-ը ստորագրեցին հուշագիր,որով նախատեսվում էր հեղուկ բնական գազի պաշարների համատեղ օգտագործում, հեղուկ բնական գազի գնումների և ծրագրերի խթանում: Երկու ընկերությունները պետք է համագործակցեն նաև հեղուկ բնական գազի մարքեթինգի, մթերման և առաքման պահանջների օպտիմալացման համար:[2]

Ինչ վերաբերում է մշակութային համագործակցությանը, ապա երկու երկրները ունեն հարուստ կապեր դեռևս անցած դարում Հնդկաստանի նախագահ Ռադհակրիշնայի և վարչապետ Ներուի այցից հետո 1959թ.-ին հիմնադրվեց Ադրբեջանահնդկական բարեկամության և մշակութային միությունը, որը խթանեց մշակութային կապերի հետագա զարգացմանը: 1959թ.-ից ի վեր պարբերաբար կազմակերպվում են տարբեր ցուցահանդեսներ, երաժշտական միջոցառումներ, օրինակ, 2009թ.-ի մարտին և հոկտեմբերին բաքվի ջազի և մուղամի փառատոնին մասնակցել են

[1] Douing business in Eurasia. https://www.eepcindia.org/download/150323164 529.pdf. Հասանելի է 23.05.2019 ժամը 13.39:

[2] Azerbaijan-India: Economic cooperation increasing. http://thebluemoon2008. com/what-ambass ادors-say/azerbaijan-india-economic-cooperation-increasing/s. Հասանելի է 23.05.2019 ժամը 13.19:

Հնդկաստանից ժամանած վոկալիստներ, ինչպես նաև ադրբեջանցի երաժիշտները պարբերաբար մասնակցում են Հնդկաստանում կայանալիք սուֆիական երաժշտական փառատոններին: Իսկ 2016-ի սեպտեմբերին Բաքվում և ի նշան երկու պետությունների միջև դիվանագիտական կապերի հաստատման 25-րդ տարելիցին մեկնարկեց հնդկական սննդի ամենամեծ փառատոնը:[12]

Այսպիսով, դիվանագիտական հարաբերությունների տարիներ շարունակ կայունությունը, երկկողմ առևտրի ընդլայնումը նպաստում է նաև մշակույթային կապերի ամրապնդմանը: Այս բոլոր գործոնները մատնանշում են մոտ ապագայում սննդի առևտրի աճին: Եվ այս կանխատեսմամբ հնդիկ արտադրողների համար ադրբեջանական շուկայում հնարավորությունների զգալի աճ կգրանցվի, քանզի Ադրբեջանը ողջունում է հնդիկ IT ոլորտի մասնագետների, դեղագործների, գյուղատնտեսների և սննդի մասնագետների գործունեությունը իրենց երկրում:

Ашхен Овсепян, "Индийско-азербайджанские политические, экономические и культурные отношения" - Дружеские и многосторонние отношения между Индией и Азербайджаном начались в декабре 1991 года, когда Индия признала независимость Азербайджана.После установления дипломатических отношений двусторонние отношения еще более укрепились благодаря ряду взаимно важных визитов, включая политические консультации в 2007, 2011 и 26 ноября 2009 г, заседание межправительственной комиссии, которые способствовали расширению сотрудничества между правительствами. Наряду с политическими отношениями развивались и экономические связи, особенно двусторонняя торговля и товарооборот, который вырос в десять раз в период с 2000 до 2010 год.Что касается культурных связей, то эти две страны тесно сотрудничают с 1959 года, когда была создана Ассоциация азербайджано-индийской дружбы и культуры, и регулярно проводятся фестивали и мероприятия, крупнейшим из которых в 2016 году был индийский кулинарный фестиваль в честь 25-летие установления дипломатических отношений.

---

[1] Автор: **Елена Косолапова.** В Баку отметили 25-летие дипломатических отношений между Азербайджаном и Индией. https://www.trend.az/azer baijan/politics/2726872.html.

[2] Diplomatic Square. http://www.diplomaticsquare.com/celebrating-the-25th-anniversary-of-azerbaijan-india-diplomatic-relations-2/ Հասանելի է 23.05.2019 ժամը 13.30:

Ashkhen Hovsepyan, "India-Azerbaijan political, economic and cultural relations" - The friendly and multilateral relations between India and Azerbaijan started in December 1991, when India recognized Azerbaijan's independence. Since the establishment of diplomatic relations, bilateral relations have been strengthened by a number of mutually important visits, such as political consultations in 2007, 2011 and on november 26 2009 the meeting of the Intergovernmental Commission, which stimulated the scope of cooperation between governments. Along with political relations, economic ties have also developed, especially bilateral trade and commodity turnover, which has increased ten times from 2000 to 2010. And what about cultural relations, these two countries have been closely cooperating since 1959 when the Azerbaijan-Indian Friendship and Culture Association was established, on the other hand festivals and events are regularly organized, the largest of them in 2016:the Indian food festival, in honor of the 25th anniversary of diplomatic relation's establishment.